

ՄԱՏԵՄԱՏԻԿԱ 6-րդ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ 2023-2024թ.

Տևողությունը - 2 ժամ 30 րոպե

- Ապրանքի գինը թանկացրին 60%-ով: Քանի՞ տոկոսով պետք է էժանացնեն ստացված գինը, որպեսզի ապրանքը վաճառեն սկզբնական գնով:
1) 40 2) 60 3) $37\frac{1}{2}$ 4) այլ պատասխան
- Բնական թիվն ունի 3 պարզ բաժանարար: Ամենափոքր քանի՞ պարզ բաժանարար կարող է ունենալ այդ բնական թվի և 98-ի արտադրյալը:
1) 3 2) 4 3) 5 4) 6
- Քանի՞ իրարից տարբեր եղանակներով կարելի է մանրել 420 դրամը առնվազն մեկ հատ 20 և առնվազն մեկ հատ 50 դրամանոցների միջոցով:
1) 3 2) 4 3) 2 4) 5
- Արամը, Վահեն և Գևորգը գնացին անտառ սունկ հավաքելու: Տուն վերադառնալիս նրանք նկատեցին, որ միասին հավաքել են 36 սունկ: Երբ Գևորգը իր հավաքած սունկի $\frac{1}{3}$ -ը տվեց Վահեին, Արամը նկատեց, որ իր հավաքած սունկի $\frac{1}{4}$ -ը Վահեին տալու դեպքում նրանք բոլորը կունենան հավասար քանակությամբ սունկ: Քանի՞ սունկ էր հավաքել Վահեն:
1) 10 2) 15 3) 8 4) 7
- Նկարում պատկերված աղյուսակի 9 վանդակներում գրված են 8-ից մինչև 16 բնական թվերն այնպես, որ աղյուսակի յուրաքանչյուր տողում և պոնյակում գտնվող երեք թվերի գումարները լինեն հավասար: Գտնել յուրաքանչյուր տողի թվերի գումարը, եթե աղյուսակի բոլոր 9 վանդակներում գրված թվերն իրարից տարբեր են:
1) 37 2) 36 3) 50 4) այլ պատասխան
- Արմենը ներկում է քարտեզը: Նա մեկ ժամում ներկում է քարտեզի $\frac{6}{7}$ մասը: Քանի՞ րոպե անց Արմենը ներկած կլինի քարտեզի $\frac{3}{14}$ -րդ մասը, եթե նա յուրաքանչյուր հաջորդ րոպեին ներկում է նախորդ րոպեների ներկածի կրկնակին:
1) Այլ պատասխան 2) 58ր 3) 15ր 4) 29ր
- Քանի՞ իրարից տարբեր եղանակներով կարելի է կողք-կողքի դասավորել 1; 2; 3 թվերը եռյակներով և չնվազման կարգով (օր.՝ (1; 1; 2); (2; 3; 3); (1; 2; 3)...):
1) 5 2) 9 3) 6 4) 10


8. Երկնիշ թվերից քանիսի՞ թվանշանների գումարն է գույգ:

- 1) 50 2) 25 3) 45 4) 20

9. 123456789 թվից քանի՞ եղանակով կարելի է երեք թվանշաններ ջնջել այնպես, որ ստացված թիվը բաժանվի 9-ի:

- 1) 3 2) այլ պատասխան 3) 7 4) 10

10. Նկարում պատկերված քառակուսիները կիսված են հավասարապես: Քանի՞ իրարից տարբեր եղանակներով կարելի է ներկել այդ նկարի $\frac{3}{4}$ մասը (ներկման դեպքում մաս կազմող յուրաքանչյուր եռանկյուն պետք է ներկված լինի ամբողջությամբ):




- 1) 30 2) 56 3) 28 4) 4

11. Գտնել այն երկնիշ թիվը, որը 7-ի և 8-ի բաժանելիս ստացվող մնացորդների գումարը կլինի 13:

12. Ափսեի մեջ կան 28 խնձորներ և տանձեր: Ցանկացած 11-ից գոնե մեկը խնձոր է, իսկ ցանկացած 19-ից գոնե մեկը տանձ է: Քանի՞ խնձոր կա այդ ափսեի մեջ:

13. Քառակուսին տրոհված է 9 հավասար քառակուսիների (տես նկարը): Ընդանենք քանի՞ քառակուսի կա նշված պատկերում:



14. Գտնել 36-ի բաժանվող այն բոլոր բնական թվերի քանակը, որոնց թվանշանները չեն կրկնվում և որոնք գրվում են 1; 2; 3; 4 թվանշանների միջոցով (թվանշաններից որոշները կարող են նաև չմասնակցել):

15. Եռանիշ թվերից քանի՞սն են, որոնք չունեն կողք-կողքի գտնվող միևնույն թվանշանը (101;.....213;.....):